ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/37975-2025

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի (Կ-1144-29.08.2025-ՖՎ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները՝ լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար:

Առաջարկում ենք միջնաժամկետ ծախսերի ծրագրի «Վերլուծություններ» մասում ներառել նաև Կենտրոնական բանկին տրամադրված անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակների վերաբերյալ տեղեկատվությունը՝ վերջիններիս վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը ապահովելու նպատակով:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ օրենքի նախագծի 3-րդ հոդվածում՝ գործող օրենքի 15[1]-ին հոդվածում լրացվող նոր 4-րդ մասում առաջարկում ենք լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝

«Վերլուծությունների մասում ներառվում է նաև Կենտրոնական բանկին տրամադրված անտոկոս ցպահանջ պետական հասարակ մուրհակների վերաբերյալ տեղեկատվությունը:»:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ